


ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան դիմել 10 ռուբլ, կէս տարւանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը լսաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեղուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թափն 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրէական խնդիրը.—Ներքին Տեսութիւն.—Հա-
մակ Նախագ. Նախակ խմբագրին. Նախակ խմբա-
գրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նախակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ
ԼՈՒՊԵՐ.—ՀԵՌԱՎԳԻՏԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՊԱՏԱՍԽԱՆ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀՐԵԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ամեն անգամ երբ յարուցվում է լրա-
գրական բանակում հրէական խնդրի մա-
սին, ընթերցողը աչքին ներկայանում է
հետեւեալ տեսարանը. բանակաւորներ մի
կողմը պալատարարում է հրէական տարրը
և չէ գտնում հրէաների մէջ ոչինչ արժա-
նաւորութիւն, իսկ միւս կողմը, զինաւո-
րապէս իրանց հրէաները, կամ նրանց
վարձկանները՝ բարձրացնում են հրէաներին
մինչև երկինքը, ամեն բան կատարեալ են
գտնում հրէական բնաւորութեան մէջ,
ոչինչ պակասութիւն նրանց մէջ չեն գտ-
նում:

Այդ տեսակ ծայրայեղութիւններին հաս-
նելով երբեք չէ կարելի վճռել որ և է վի-
ճելի հարց: Հրէական խնդրի մասին եղած
պոլէմիկայի մէջ մենք, դժբաղդապէս, եր-
բէք չենք հանդիպել լուրջ, անկողմնապահ
հայեացքների, այլ միշտ կրթով կուրացած
ծայրայեղութիւններին:

Հրէահրէական կուսակցութիւնը բանա-
կուսակցութիւն միշտ մասնացոյց էր անում միա-
կողմանի կերպով հրէաների մի պակասու-
թեան վրա, այն է որ հրէաները հարս-
տահաբէր տարր են: Հրէաներին պաշտ-
պանող կողմը դրան միշտ պատասխանում
էր, որ բոլոր հրէաները հարստահարողներ
չեն, այլ հրէական ցեղը տուել է մարդ-
կութեանը երեւելի, անձնուէր, անձնուրաց
մարդկանց մի ահագին բազմութիւն, հա-
սարակցութեան կեանքի բոլոր ասպարէզներում՝
գիտութեան, գեղարուեստի, երաժշտու-
թեան, փիլիսոփայութեան, բանաստեղծու-
թեան, արդիւնագործութեան, պետական
կեանքի ասպարէզներում: Այդպիսով բա-
նակաւոր անվերջանալի կերպով շարունակ-
վում էր, ոչ մի կողմը միւսին չէր համո-
զում և ոչ միմեկը ոչ ուրիշից բերած ապա-
ցոյցներով չէր համոզվում: Հրէասէրների
միայն մի փաստի, մի հաստատութեան
դէմ մինչև վերջին ժամանակները հակա-
հրէականները ոչինչ չէին կարող ասել և
յազմել: Եթէ էին լինում, երբ վիճի մէջ
հանդէս էր գալիս այդ դատողութիւնը:
Ահա ինչի մէջն է կայանում այդ փաստը,
այդ իրողութիւնը:

Հրէաները, ասում էին նրանց պաշտ-
պանները, դարերից ի վեր ապրելով այլ և
այլ թէ եւրոպական և թէ ասիական ազ-
գանքի մէջ, ամեն տեղ առնում էին, այդ,
բայց թէ այդ ատելութեան պատճառը
հրէաների անձնական պակասութիւններն
են, այդ պակասութիւնները իրանց կողմից
ծաղում են այն հանգամանքից, որ ամեն
տեղ, որտեղ հրէաները մարդկային իրա-
ւունքներից զուրկ էին, բարոյապէս ծնը-
ված էին, նրանք ընդունում էին ստորութիւն-
ընդմիջումը ստոր յատկութիւններ: Իսկ
այն քաղաքակրթութիւններում, որտեղ
հրէաներին շնորհված են մնացած քաղա-
քացիների հետ հաւասար քաղաքացիական
իրաւունքներ, այնտեղ հրէաները կրթելով
են իրանց վատ յատկութիւնները և սեփա-
կանել են իրանց այն բոլոր լաւ կողմերը,
որոնք յատուկ են ոչ-հրէայ, եւրոպացի
քաղաքացիներին:

Այդ տեսակ դատողութիւն լուրջում
էր մինչև վերջին ժամանակները հակա-
հրէականներին. նրանց մասնացոյց էին ա-
նում խաղաղի, ֆրանսիայի, Գերմանիայի,
Անգլիայի, Շվեյցարիայի վրա, որտեղ հրէ-
աները կատարելապէս հաւասարակցում են
միւս քաղաքացիներին հետ իրանց քաղա-

քաղաքական իրաւունքների մէջ, և այլ ևս
իրանց նախնին, հրէական բնաւորութիւ-
նից ոչինչ չեն պահպանել, այլ խաղա-
ղում հրէան կատարեալ խաղաղի է դար-
ձել, ֆրանսիայում.—Ֆրանսիայի, Անգլիա-
յում.—անգլիայի, Գերմանիայում.—գերմա-
նացի և այլն:

Բայց որքան էր հրէասէրների զարմա-
քը և հակա-հրէականների ուրախութիւ-
նը, երբ վերջին տարիներում եւրոպայի
այն բոլոր երկրներում, որտեղ հրէաները
վաղուց է արդէն որ հաւասար իրաւունք-
ներ են վայելում, սկսեցին բողոքներ յայտն-
վել մամուլի, զրախանութեան, քաղաքա-
կան և հասարակական շրջաններում և
գիտական աշխարհում, թէ հրէաները
որքան աւելի են ձեռք բերում մարդկային
իրաւունքներ, այնքան աւելի դառնում են
ձեռնող, հարստահարող ուրիշ տարրերի...

Ուրեմի հրէաներին մարդկային հաւա-
սար իրաւունքներ տալը,—ոչինչ չէ օգ-
նում, ասում էին յաղթական կերպով հա-
կահրէականները: Հրէայի մարդատեսաց
բնաւորութեան պատճառը պէտք է մի այլ
բան լինի, քան թէ քաղաքացիական իրա-
ւունքներից զուրկ լինելը, որովհետեւ քա-
ղաքակրթութիւնը մարդկութեան մէջ բոլոր քա-
ղաքացիական իրաւունքները վայելելով
հանդերձ հրէան դարձեալ չէ ձուլվում
միւս եւրոպական տարրերին հետ, միշտ
նայում է իրան հիւրասիրող քաղաքակրթ-
ւածի վրա, որպէս մի թշնամական բանա-
կի վրա, միշտ հրէայ է մնում, ամեն տա-
րի մէջ միշտ իրան օտար է դուրս և այն
ազգութիւնն է, որի շրջանում ապրում է,
իրան համար օտար է համարում, ատելով
նրան և աշխատելով նրան միշտ հա-
րստահարել, նրան վնասել, նրան քա-
ղաքակրթեան չափ ոչնչացնել, ապրել նրա
հաշվով և հարստանալ նրա հաշվով: Դրա-
նից հակահրէականները այն եզրակացու-
թիւնն են դուրս բերում այժմ, որ հա-
կաւոր էլ չէ, նոյն իսկ փոքրագուր և վը-
նասական է հրէաներին երկրի միւս քա-
ղաքացիների հետ հաւասար մարդկային
իրաւունքներ շնորհել:

Բայց ձիւղ է, արդեօք, այդ տեսակ դա-
տողութիւն և նրանից դուրս բերված եղ-
րակացութիւնը: Այդ մասին մի այլ ան-
գամ կը խօսենք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 6-ին

Կար մի ժամանակ, երբ Նոսթրի կող-
մից մրցում էր շատ քաղաքների հետ, պարտա-
կեղով առողջապահական այնպիսի պայմաններ,
որոնք անհրաժեշտ են մարդու գոյութեան հա-
մար, դրան նպաստում էին երկրի վայելուչ դիրքը,
կաղաւթիկն ուղե և կենսաբար ջուրը, որոնց պատ-
ճառով առաջնորդում Նոսթրի կարելի էր կապա-
նի առաջնակարգ տեղերից մէկը հանել: Դրանի-
կիմայական բաւականացուցիչ պայմաններ, Նո-
սթրի միշտ ունենում էր բազմաթիւ այցելուներ, ո-
րոնք հենց ամառային սկիզբներում շտապում էին
դալ Նոսթրի: Դառն հիւանդներ և թուլակալ մար-
դիկ իրանց առողջութիւնը վերականգնեցնելու և
կաղաւթիկու կենտրոն ընտրում էին Նոսթրի, և
մեծամասնութիւնը իրանց բարձրագոյն հասած վե-
րադառնում էին իրանց տեղերը: Այս իրողութիւ-
նը եղել է մի փաստ, որով Նոսթրիին կարող է
եղել պարծնալ օտարների առաջ:

Իսկ այժմ ինչ ենք տեսնում: Զարմանալի տա-
րբերութիւն Այդ մի ժամանակային Նոսթրի այժմ
հակապատկեր տեսարան է ներկայացնում: Օղը
մեր միակ միջնորդութիւնը՝ այժմ տեսնում ենք
ապականված: Զուրկ թէ իր նախնին գրովեան
մէջ է, բայց նախնին կաղաւթիկն ուղե բաղադ-

յութիւնից, չունի այն մեծ նշանակութիւնը, որ
ունի Եւրոպայում: Նոսթրի, որ մի ժամանակ
իր դիրքով օտարների ուշադրութիւնն էր դրա-
ւում, որ իր առողջապահական պայմաններով
կեանքը յենարան էր բնակչներին, այժմ այդ մի
և նոյն Նոսթրի իր հակառակական պայմաննե-
րով վտանգ է սպառնում մի և նոյն բնակչնե-
րին: Կարծես Նոսթրի կերպարանափոխվել է,
կարծես կորցրել է իր դիրքի հաւասարակշու-
թիւնը: Ինչին վերաբերե՞լ այս փոփոխութիւնը:
Օղը ներկայ պայմանները ստիպում են մեզ այս
հարցը առաջարկել, որ ինքն ըստ ինքեան մի ուշա-
դրութեան արժանի հետաքրքիր խնդիր է, որ
հարկաւոր ենք համարում պարզել:

Եթէ Նոսթրին հենց ի բնէ ներկայ պայմանների
մէջ լինէր, մենք այնքան չէինք ցաւի, բայց ցա-
ւում ենք, երբ տեսնում ենք, որ դրան նպաստում
են այնպիսի կողմնակի ազդող հանգամանքներ,
որոնց մէջ զլխաւոր դեր է խաղում անմարդու-
թիւնը: Ահա հենց անմարդութեան վնասակար
ազդեցութիւնից փչանում է օղը, անդի տալով
ազգայնականութեան մէջ զանազան տարափոխի-
կանաւորութիւններ: Իսկ անմարդութիւնը իր կող-
մից առաջ է գալիս ժողովրդի անհասկացողու-
թիւնից, բռնի իր պարտքը չը ճանաչելուց:
Մարդապահութիւնը մի այնպիսի խնդիր է, որից
կարված է մի օր և է ժողովրդի ներքին բարե-
կեցութիւնը. արդէն ամեն տեղ սկսել են ուշա-
դրութիւն դարձնել այդ հարցի վրա: Բայց Նո-
սթրում այդ խնդիրը դեռ ևս մնացել է խնդիր,
այնպէս որ դրա իրազդողութիւնն մենք երեւակա-
յական աչքով ենք նայում, եղբայրացեալով թէ մի
զույգ քանի մի բարեկամը հանգամանքներից
բաղդ ունենանք տեսնել դրա իրազդողութիւնը: Բայց
ժողովրդի անհոգութիւնը տեսնելով, մենք չենք
կարծում թէ երբ և է ժողովրդը դուրս գալ իր
ներկայ անարժեքութիւնից և ուշադրութիւն դարձ-
նէ մի այնպիսի հարցի վրա, որ կեանքի և մա-
հու խնդիր է: Զուրկ ենք, որ մեր երակայնու-
թիւնը եթէ ոչ միշտ պէտք է մնայ երակայնու-
թիւն, դարձեալ երկար տարիների գործ, որովհետեւ
հասարակութեան անհոգութիւնը մի պատե՛ն է մի
այնպիսի խնդիր մէջ, իսկ այդ պատե՛ն վերանայը
երկար կը տևի: Վերև ասացինք թէ օղը փչանալը
առաջ է գալիս ժողովրդի անհասկացողութիւնից:
Ապացոյցները քանի մի խօսքերով ասածներս: Տե-
ղիս օղի փչանալու վրա զլխաւորապէս ազդում
են այն անմարդութիւնները, որոնցով լի է քա-
ղաքը: Ժողովրդի մի մասը որոշ դադարաբար չու-
նենալով անմարդութեան վնասակար ազդեցու-
թեան վրա, միւս մասը անհոգ լինելով, բոլորու-
թիւն ուշադրութիւն չեն դարձնում աղբի կուտակ-
ների վրա, որոնցով լի են բաղնիքը, և աների չըր-
ջակաները: Երկար մի տեղ մնալուց աղբը, ի հա-
կէ, փռում է և իր զգուշիկ դադարաբարութեանը
լցնում է աների շրջակայները: Այստեղ, ի հաւրկէ,
մենք չենք մեղադրում բռնիքին, նա չէ կարող ա-
մեն մի տուն հեռանալ, ստիպել է մի մարդը լի-
նեն բաղնիքը. այստեղ մեղաւոր է ինքն ժողո-
վրդը, իր անհասկացողութեան և անհոգութեան
պատճառով: Բայց կան և դէպքեր, որտեղ բռնի-
կըն է մեղաւոր: Օրինակ, մի և նոյն ապականու-
թիւնները մենք յաճախ տեսնում ենք փողոց-
ներում, այն էլ զլխաւոր փողոցներում: Այդպիսի
փողոցներից անցնելիս շատ անգամ մի օր և է
նեկված գլխովից այնպիսի դարչելի հոտ է փչանում,
որ ստիպված ենք լինում ակամայ հոտաւորութիւն-
ներս օր և է բանով ծածկել: Եթէ այսպիսի դէպ-
քեր առաջին, երկրորդ, մինչև անգամ տասնե-
րորդ անգամներ լինեն, մենք կարող ենք այդ
երկրորդը զանաւորութեան տալ. այդպիսի տեսա-
րաններ մենք այնքան սովոր ենք տեսնելու, որ
մեզ, զիւղացիներին համար նրանք բնական երե-
ւոյթներ են դարձած: Անշուշտ բռնիքը նոյնպէս
պատահած կը լինի այդպիսի տեսարանի և ստիպ-
ված մեղքէ հոտաւորութիւնը ծածկել: Այստեղ
զուտ մեղք խստում ենք նշանաւոր փողոցների
մասին, որոնք համեմատաբար պէտք է մաքուր
լինեն, իսկ անշան փողոցների անսիրտութեան

մասին չենք էլ խօսում: Ուստի անմարդական պարտքն
է հսկել փողոցների մաքրութեան վրա, իսկ ու-
ստի անմարդական էլ իր կողմից այն ժամանակ հրա-
կողութիւն կանի, երբ այդ առիթով բռնիք յանձ-
նարարութիւն լինի: Բայց որովհետեւ այդ չէ լի-
նում, ամեն տեսակ աղտոտութիւն մնում է մինչև
այն ժամանակ, երբ լուծվելով ապականում է օ-
ղը իր զարչելի բուրմունքով: Եւ ահա մի օր և
է հիւանդութեան երակուն պէս, անմաքրութեան
դաժան ներգործութիւնը, պատճելով մարդկային
թուլութիւնը և անհոգութիւնը, հազարներով դո-
հեր է տանում: Անմաքրութեան առաջ մղվելով
պակաս դեր չէ խաղում մետաքսեայ գործարան-
ների ներգործութիւնը: Մետաքսեայ գործարան-
ները թէն շատ մարդկանց կենսական պիտոյնե-
րը մատակարարում են, այնու ամենայնիւ իրանց
օգտակարութեան հիւր ունեն նաև իրանց յատուկ
վնասակարութիւնը, որովհետեւ նրանց մեծ մասը
կառուցված լինելով քաղաքի կենտրոնում, աներին
կից,—նրանցից արտաբերող դարչանոտութիւնը
պակաս վնասակար չէ: Բայց ո՞վ է այդ մասին
խորհող, ո՞վ է ընդհանուր բարեկեցութեան վրա
մտածողը: Գործարանատէրերը իրանց կուտակա-
նանքներն են ծառայում, նրանց ինչ փողով, թէ
գործարանները քաղաքի կենտրոնում հիմնելով,
խախտում են մի ամբողջ ազգայնականութեան ա-
ռողջապահական խնդիրը:

Վ. Յ.

ՆԱՄԱԿ ԽՈՒՄԻՑ

Թիֆլիս, 9 հոկտեմբերի

Ամենքին յայտնի պիտի լինի, որ այսուհետեւ
հայ թատրոնը դադարեց լուրջ դադարի լինելուց,
և դառն է արդէն իրողութիւն, գործ, որը բացի
իր քաղաքակրթական նպատակներից առաջ տանե-
լուց, միշտ է դառն և դերասանի օրական ապ-
րուստը հայթայթելու: Ներկայումս Թիֆլիսում,
կովկասում և մասամբ Ռուսաստանում, տասնա-
ւոր թափառող հայ դերասաններ կան, որոնք այդ
արհեստով ապրուստի միջոց են որոնում իրանց
համար:

Եւ ինչ է յայտնվում: Այս ինչ դերասան կամ
դերասանուհի կրելով «Թիֆլիսի հայ դերասանա-
կան խմբի» անդամի անունը, ամեն մի քաղա-
քում իրանց «հուշակար» կամ «տաղանդաւոր»
դերասաններ են ներկայացնում և հազար ու մի
տեսակ անվայել միջոցներով դուրս են գլչում
խեղճ հայ հասարակութեան զրպանից նրանց
բուրլիները, ոտորացնելով թէ հայ դերասանի և
թէ «Թիֆլիսի դերասանական խմբի» վարկը:
Այդպիսով ոչ որ հուշակար դերասան չի դառ-
նայ և ոչ էլ հազարներ ձեռք կը բերի, այլ հե-
տեանք կը լինի որ ճշմարիտ գործունեայ և
տաղանդաւոր դերասան անգամ անկարող կը լի-
նի որ և է տեղ ընդունելութիւն գտնել, որովհե-
տեւ նրան էլ կը հաւան ի շարս ինքնակոչ տա-
ղանդների:

Իմ կարծիքով փոխանակ այդպէս անելու, թող
դերասանական բոլոր ցրված ոյժերը դուրսվեն,
հաւաքվեն մի տեղ, միացնեն իրանց զաւրկած ոյ-
ժերը և կազմելով որոշ հիւրերի վրա մի դերա-
սանական ընկերութիւն, մշակեն թատրոնական
գործը, որը այդպիսով օրից օր առաջ դնալով
կը ստեղծէ մի շօշու, որի շնորհով թէ թատ-
րոնական ընկերութեան կը հարստանայ, թէ
նոր գործող տաղանդներ առաջ կը գան և թէ
կը վարձատրվի այնուհետեւ դերասանների աշխա-
տութիւնը: Իսկ այն տեղը, ուր պիտի դուրսվին
հայ դերասանական ոյժերը, Թիֆլիսն է, որը
Ռուսաստանի հայոց մոտաւոր կեանքի կենտրոնն
է, որտեղ առել է իր սկիզբը հայ թատրոնական
ընկերութեան համար նրանք բնական երե-
ւոյթներ են դարձած: Անշուշտ բռնիքը նոյնպէս
պատահած կը լինի այդպիսի տեսարանի և ստիպ-
ված մեղքէ հոտաւորութիւնը ծածկել: Այստեղ
զուտ մեղք խստում ենք նշանաւոր փողոցների
մասին, որոնք համեմատաբար պէտք է մաքուր
լինեն, իսկ անշան փողոցների անսիրտութեան

Եթէ վերջինք եւրոպական աղբի թատրոն-
ների պատմութիւնը, օրինակ անգլիացիների և
ֆրանսիացիների, կը տեսնենք որ թատրոնը դար-
գացել է իրանց դերասանների շնորհով, դերասա-

Եւրոպական կար ու ձև և դերձակութիւն էին սովորեցնում, ձեռագործի դասերը մեռած դրութեան մէջ էին մնացել, մինչև որ Սոցիալական հրաւիրելը:

«Հիւսիսային դրժակութիւնը» հեռագրում է մեղ, որ ֆինանսների միջնորդութիւնը յայտնել է թէ չարաբարձները պէտք է վճարեն 10 կօպէկ պրէմիա 1887/8 տարեկա արդիւնաբերած չարքերի համար ակցիոնը վճարելու ժամանակ, այսինքն մինչև սեպտեմբերի 1-ը 1888 թվին:

«Հիւսիսային դրժակութիւնը» հեռագրում է մեղ կառավարական հետեւեալ կարգադրութեան մասին: Ցայանոված է որ մաքսահարկը անկանոն կերպով հաշուելու դէպքում, ապրանքատէրերը պարտավորւում են լրացնել մաքսահարկի պակասորդը, եթէ պահանջը այդ մասին նրանց յայտնված կը լինի ոչ աւելի ուշ, քան երկու տարի ապրանքը ներմուծելուց յետոյ:

ԲԱՐՈՒՅԻՑ մեղ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը տպագրելու համար: «Բարոյն մի Թրնտեսական քաղաք է, բայց մի հարց, որ շատ ձեռնտու հարց է, մեր քաղաքի հարուստները, կարծես մոռացել են. դա ձիաբաշ կերպովու (կոնկայի, տրամվայի) հարցն է: Եթե անասուն հազար բնակիչ ունեցող քաղաքին վաղ թէ ուշ հարկաւոր է ունենալ մի տրամվայ, և այդ դիտման մեր հարուստները, բայց իրանց մէջ չեն միատնում, մի 20 հոգի հարուստներից չեն միացնում իրանց կապիտալները այդ ձեռնտու և շահաւէտ գործին ձեռնամուկ լինելու: Երբ սպասում են, որ, ինչպէս Քիֆիսում, օտար կապիտալիստներ դան անցկացնեն քաղաքում մի ձիաբաշ կերպովու և հնձեն մեր հաղթանքը: Բարոյն հայ հարուստների լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ հարցի վրա»:

Հնորակալութեամբ ստացանք պ. Ալէքսանդր Աբելիանցի թարգմանած Վիկտոր Հիւգօի «Մահապարտի վերջին օրը»: Գրքովը տպւած է Քիֆիսում, Գ. Մարտիրոսեանցի տպարանում, ներկայ 1887 թվին: Թարգմանութիւնը վատ չէ, և հեշտութեամբ է կարգադրում: Գիրքը 40 կօպէկ է: Ստանալ կարելի է ուղարկելով թարգմանչին, բացի դրժակի դիմից, մի հատ 7 կօպէկանոց մարկա, որպէս փոստի ծախս: Գիրքը պէտք է հետեւեալ հասցեով. Баку, Александр Абелянцъ.

ԿԱՐՁՈՒԱՆԻՑ մեղ գրում են հոկտեմբերի 8-ից, որ այդպէս օստտիկ տարածված է այժմ կարմիր ու կարմիր հիւսնադրութիւնը, բայց բարեբաղդաբար չունի, թղթակցի ասելով, վնասակար հետեւանքներ:

ԱՌԱՂՅԱՆՑԻՑ մեղ գրում են հետեւեալ: «Ձեր լրագրի № 113-ի մէջ տպված լուրը իբր թէ կառավարական դպրոցի նոր շէնութիւնը աւարտվելու վրա է և թէ այդ շէնութեան հիմքը դրել է պարսիկ Գարոյեան, — լրտվում սխալ է: Շէնութիւնը դեռ ևս չատ հետու է աւարտվելուց և պարսիկան կրէք հիմք դրած չէ կարապետեան դպրոցի նոր շէնութեան»:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեղ տեղեկացնում են, որ այդ քաղաքի կողմերում շատ տարածված է այժմ անասունների մէջ (ազար) կոչված հիւսնադրութիւնը: Երեանից եկած է Նոր-Բայաղէտ մի անասնաբոյժ (վետերինար) պ. Շաքաեկ, այդ հիւսնադրութիւնը հետազոտելու, բայց հետազոտութեան հետեւանքը դեռ յայտնի չէ: Թղթակցին ասում է, որ աղաթով հիւսնադրող անասունների մեծ մասը օստտում են, և շատ քիչերն են լաւանում:

Օտարները շատ հետաքրքրվում են այժմ կոլկասեան երկրով, ասում է «Новое Время» լրագրից, և արտասանմանում, մանաւանդ Գերմանիայում, յաճախ հրատարակվում են կովկասեան նուիրված լուրջ գիտնական աշխատութիւններ: Նորբերուս, օրինակ, Լէպյցիում հրատարակվեցաւ մի լայնածաւալ հեղինակութիւն «Der Kaukasus und seine Völker» վերնագրով, որ պատկանում է պ. Գոն-Լիքերտի գրչին: Այդ հեղինակութեան մէջ պ. Գոն-Լիքերտ աշխատել է ի մի ժողովել մեղ մօտ, կովկասում, վերջին տարի տարիների ընթացքում ձեռք բերված տեղեկութիւնները, որոնք լուս յայտնի չեն եւրոպային:

Ինչ, կովկասի ժողովուրդների մասին: Շատ հետաքրքիր է մանաւանդ գրքի այն մասը, որը խօսում է անտարազօրեական չափերի մասին, որի սկիզբը դրել է ինքն գրքի հեղինակը, որը բնակվում էր կովկասում և ուսաց կայսերական աշխարհադրական ընկերութեան անդամ էր: Վերջին ժամանակներում, կովկասին նուիրված այլ աշխատութիւններից կարելի է յիշել նորբերուս վախճանված երկրագետ Արիսի Վիլհէնայում տպված աշխատութիւնը, որ վերաբերվում է լեռնային Հայաստանի ուսումնասիրութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖԻՆԱՆՍԱՅԻՑ

Մօնպէլէ, 2/14 հոկտեմբերի

Ի նկատի ունենալով, որ Մօնպէլէի երկրագործական ուսումնարանում հայ ուսանողները միշտ անարդար են լինում և ամեն տարի չարտադրաբար նոր երկրագործներ են գալիս վերջինից: Ուսումնարանը մանկու դիտաւորութեամբ, հարկում համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել այս տարեկա աւարտածների և այժմ այստեղ գտնվածների մասին, նշանակել և նորերի ընդունելութեան պայմանների վերաբերմամբ:

Ընդհանրապէս Մօնպէլէի եկող հայ երկրագործները երկրագործական ուսումնարանը մտնելու նպատակով են գալիս, թէ և երբեմնայեւ հայ ուսանողներ լինում են և այլ մասնագիտական ճիւղերում:

Այս տարի մարտի վերջին աւարտել են չորս հայեր, պ. Սոցիալական, պ. Մալեանց, Բ. և Ս.:

Այժմ Մօնպէլէում գտնված հայ ուսանողների թիւը 7 է, որոնցից 4-ը երկրագործական ուսումնարանում են, երկուսը բժշկական ֆակուլտետում և մէկը լրացնում:

Ուսումնարանի 4 ուսանողներից 2-ը հին ուսանողներ են, Ս. Թիֆլիսցի, երբորդ կարսում է և 1888 թվին մարտին կաւարտէ, միւսը Մ. չուլեցի, երկրորդում է: Նոր ընդունվածներն են Գ. չուլեցի և Մ. երևանցի: Բժշկական ֆակուլտետում 2 ուսանողներից մէկը Զ. մեղրեցի, հինգերորդ կարսում է, միւսը Գ. բուսինացի, իսկ լրացնում գտնված ուսանողը Ս. տաճկահայաստանցի է:

Մի քանի օրից յետոյ մի հայ ևս կը գա, Գ. երևանցի, որը երկրագ. ուսումն. աղատ ունիցող է և այժմ Բօրդօի չրջակայքում ճանապարհորդում է:

Երկրագործական ուսումնարանում կան գիշերօթիկ և երթևեկ ուսանողներ: Կարող են լինել և աղատ ունիցողներ:

Իսկական ուսանող ընդունվելու համար պէտք է քննութիւն տալ երկրագործական միջնորդութեան հաստատած ծրագրով:

Այդ ընդունելութեան քննութիւնը լինում է գրաւոր և բերանացի:

Գրաւոր քննութիւնը լրացացած է մի շարք գրութիւնից, որի նիւթը լինում է երկրագործութեան վերաբերեալ մի խնդիր (թեմա), մի թուական կամ աղբերակական և մի երկրաչափական խնդիր: Բերանացի քննութիւնները լինում են հրապարակական և հետեւեալ առարկաներից՝ քիմիայից, ֆիզիկայից, երկրաչափութիւնից, աղբերայից, թուաբանութիւնից և աշխարհագրութիւնից:

Բայց եթէ խնդրատուն լայնել է, այսինքն ունի հատուկութեան վկայական, այն ժամանակ նա ընդունվում է առանց քննութեան: Ինչպէս Ներսիսեան դպրոցի, նոյնպէս և արքունական այլ դպրոցների աւարտման վկայականների արտօնութեան մասին վճարական ոչինչ չէ կարելի ասել, դա կախված է ուսուցչական խորհրդի որոշումից:

Ներսիսեան դպրոցի աւարտման վկայական ներկայացնողին երբեմն քննում են միայն քիմիայից, որը վկայականում նշանակվում չէ, պատճառ որ այդ աւարտան այնտեղ չէ աւանդվում, իսկ երբեմն քննում են ամեն աւարականից, ինչպէս այս տարի եղաւ:

Բայց պէտք է աւելացնել, որ յամենայն դէպքում նշանակութիւն ունեն թէ Ներսիսեան դպրոցի և թէ այլ արքունական դպրոցների վկայականները, մանաւանդ վերջինների:

Յիշեալ վկայականների ներկայացնողներին ոչ թէ քննում են լայն խնդրատուների հետ, այլ

առանձին, ուսումնարանի դիրեկտորի և պրոֆէսորների ներկայութեամբ:

Այս տարեկա նոր ընդունված հայ ուսանողներից մէկը Մ. ներկայացրել էր Ներսիսեան դպրոցի աւարտման վկայականը, իսկ միւսը Գ. Շուշու քաղաքային ուսումնարանի չորրորդ դասարանի աւարտման վկայական:

Ներսիսեան դպրոցի վկայական ներկայացնողին քննեցին ֆիզիկայից, քիմիայից, աղբերայից և երկրաչափութիւնից. իսկ քաղաքային ուսումնարանի վկայական ներկայացնողին միայն 2 աւարկայից, ուրեմն վերջին վկայականը գերադասեցին Ներսիսեան դպրոցի վկայականից, որի պատճառը, ինչպէս դիրեկտորը բացատրեց, Ներսիսեան դպրոցի հոգևոր սիմիոնիստ լինելն է:

Անցեալ տարի մէկը ներկայացրել էր Ներսիսեան դպրոցի վկայական և նրան առաջարկել էին միմիայն քիմիայից քննութիւն տալ: Հաւանականաբար, եթէ չարտադրեւ մի քանի տարի Ներսիսեան դպրոցի վկայական ներկայացնողին քննեն ամեն աւարականից և տեսնեն որ նրանք ծանօթ են մաթեմատիկական աւարականներին, այն ժամանակ այդ վկայականը կը ստանայ մի որոշ արտօնութիւն: Բայց քանի այդ վերջնականապէս աղդարարված չէ, պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, որ կարող են ամեն աւարկայից քննութեան ենթարկել:

Գիշերօթիկ ուսանողները տարեկան վճարում են 1000 ֆրանկ՝ 300 ֆ. մոնետաց, 300 ֆ. յունկարին և 400 ֆ. ապրիլին: Այդ գումարի մէջ մտնում են ուսման, բնակարանի, սննդի, լույսի, վառելիքի, անխոյժու և լուսացքի ծախքերը, իսկ հաջուտը և ուսումնական պիտոյքները ուսանողի գործն է:

Երթևեկները, ինչպէս և աղատ ունիցողները, վճարում են տարեկան 200 ֆրանկ միայն վարձ: Պէտք է ասած, որ գերադասելի է լինել իբրև գիշերօթիկ ուսանող, որովհետև նրանք թէ աւելի քիչ են ծախսում, ի հարկէ, համեմատելով քաղաքում ապրողի հետ, և թէ աւելի յարմարութիւններ ունեն պարապելու համար: Բաւական է միայն յիշել, որ երթևեկ ուսանողը օրը 2 ժամ գործ է դնում ուսումնարան գնալ գալու համար, որովհետև նա ստիպված է օրը 2 անգամ յաճախել ուսումնարան, իսկ ուսումնարանը քաղաքից բաւականաչափ հեռու է և գնալ գալու համար գործ է դրվում մի ժամ:

Շաբաթի տեսակէտից դարձեալ գիշերօթիկ լինել ձեռնտու է, որովհետև եթէ 1000 ֆրանկից հանենք 200 ֆ. ուսման փողը, այն ժամանակ դուրս կը գա, որ ուսանող իր բնակարանի, սննդի, լուսացքի, լույսի և վառելիքի համար վճարում է միայն 800 ֆ., այսինքն ամիսը մօտաւորապէս 67 ֆ., այն ինչ մի և նոյն պահանջների համար քաղաքում ապրողը, որը օրը մի անգամ է միայն ճաշում, կը ծախի ոչ պակաս քան 80 ֆրանկ:

Բայց յիշեալ առաւելութիւններից, օտարներին համար գիշերօթիկ լինելը մի առաւելութիւն ևս ունի — լեզու ուսումնասիրելու յարմարութիւնը, պատճառ որ քաղաքում ապրողները պրակտիկ շատ քիչ են ունենում լեզուից, որովհետև այստեղ ուսանողները համար ընտանիքների զոհները լինել են, այն ինչ ուսումնարանում կան մօտ 80 ուսանող ֆրանսիացիներ: Բայց պէտք է ասած որ գիշերօթիկ ուսանողները աղատութիւն չեն վայելում:

Խնդրելը տրվում է ոչ ուշ քան օգոստոսի վերջը նոր տոմարի հաշուով, իսկ Յուլեան տոմարով, որը գործ է ածվում Ռուսաստանում, մինչև օգոստոսի 19-ը, բայց լինում են և բացառութիւններ: Խնդրելի հետ պէտք է ներկայացնել և հետեւեալ թղթերը. 1) ծաղկի վկայականը, 2) անցագրերը, 3) ծննդեան վկայականը, 4) երաշխաւորութեան վկայականը, 5) վկայական մի որ և է ուսումնարանից ստացած (եթէ միայն ունեն): Վերջինից վկայականներից, ծննդական վկայականը, ծաղկի և ուսման վկայականը պէտք է թարգմանված լինեն ֆրանսերէն և հաստատված Ռուսաստանի մի որ և է քաղաքի նոտարի կնիքով: Այդ թղթերը այստեղ ևս կարելի է թարգմանել և հաստատել համար պէտք է գնալ մօտակայ Սետ քաղաքը: Այստեղ աւելի թանգ է նստում:

Երաշխաւորութեան վկայականը դրվում է լրնշարատով հօր, եղբոր, հոգաբարձու կամ մի այլ մարդու կողմից, որը բնակվում է Ֆրանսիայում: Այդ թղթերը հաստատվում է քաղաքապետի (maire)

Կնքով: Այդ վկայականում երաշխաւորող անձնատուութիւնը յանձն է առնում վճարել ուսումնարանին, եթէ ուսանողը մի որ և է պատճառով չէ վճարում:

Այս բոլոր թղթերը, այսինքն ծննդական, ծաղկի և ուսման վկայականները, անցագրեր և երաշխաւորութեան վկայականը խնդրելի հետ ի միայն ուղարկվում են կամ ուղղակի երկրագործական միջնորդին կամ ուսումնարանի դիրեկտորին, որը ուղարկում է դարձեալ նոյն միջնորդին:

Քննութիւնները սկսվում են հոկտեմբերի 10-ին և տևում են 3—4 օր:

Մանրամասն տեղեկութիւններ կամ ուսումնարանի ծրագիրը ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հասցեով. Phamnia, Monsieur Moussiniantz Ecole Nationale D'Agriculture Montpellier. Մ. Մուսիսեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Գերմանական աղապիւն-ազատամիտ և պահանջողական միացած կուսակցութիւնները այս օրերս բաւական նշանաւոր հարուած ստացան: Շարատաւ քաղաքի մէջ եղած կրկնադուշարկութեան ժամանակ ընկալաւ անդամ ընտրվեցաւ աղատ մտածողների թիւերում, Բերլինի քաղաքապետ ֆոն-Ֆորէնբերգ: Ինչքան մտաբերում են մեր ընթերցողները վեց ամիս առաջ կայացած ընդհանուր ընտրութիւնների ժամանակ առաջին երկու կուսակցութիւնները յաղթութիւնը տարան: Այժմ Ժողովուրդը տեսնելով որ այդ երկու կուսակցութիւնների հնորիւ օրից օր հարկերը աւելացնելու օրէնսդրութիւնները բաղմանում են, նորից դիմում են աղատ մտածողներին, այն կուսակցութեան, որ միշտ աշխատել է Գերմանիայի առաջադիմութեան համար:

— Բերլինի «National Zeit.» լրագիրը հաղորդում է, որ ձեռնարկվում են նոր միջոցներ, աւելի կատարելագործելու կամ նորից կանգնեցնելու նոր ամբողջ Պրուսիայի արեւելեան սահմանի վրա գտնվող Գրաուդենցի և Տօրնի չրջակայքում:

— Փարիզի դիմադրական մամուլը օգտվելով կաֆարէլի գործից, աշխատում է հանրապետութեան նախագահի վարկը ձգել, օրինակ, «Figaro» լրագիրը պահանջում է, որ Նիսեան պալատը մաքրվի այնպիսի մարդկանցից, ինչպիսին է նախագահի փեսայ Վիլսոն և նրա նմանները:

— Կորուրդի պրինցը պաշտօնագրերի արեց զենքով աղիւստան Նիկոլայի: Ասում են, որ այդ բանը կապ ունի Բալգարիայի այժմեան կառավարչների դէմ բացած մի նոր դաւադրութեան հետ:

— Կորուրդի պրինց Ֆերդինանդը խօսելով «Polit. Cor.» լրագրի Սօֆիայի թղթակցի հետ, ասել է որ նա ցանկութիւն ունի հաշտեցնել Բալգարիայի մէջ գործող քաղաքական կուսակցութիւնները: Պրինցայում եղած անկարգութիւնների պատճառով, որի ժամանակ դուրը զենք էր բանեցրել, նշանակված է խիստ քննութիւն: Ունդարիայում և մինչև անգամ Անգլիայում ընտրութիւնների ժամանակ անկարգութիւնները միշտ պատահում են, ինչու դարմանալ ուրեմն, որ անկարգութիւններ պատահում են և Բալգարիայում: Պրինցը աւելացրեց, որ նա նախօրը լուրջ կերպով պատրաստվել էր Բալգարիա իր գալուց՝ առաջ եկած հետեւանքները ընդունելու: Նա հաւատացած է, որ Բալգարիա իր գալու հետեւանքները արժանի կը լինեն իր բարի անուան և օգուտ կը բերեն Բալգարիային:

— Նոյն լրագրի տեղեկութիւններին նայած, ուսաց դիւլոմատիան մեծ ջանք է գործ դնում, որ Բ. Կուրը ապօրինի յայտնի պրինց Ֆերդինանդի ընտրութիւնը և առաջարկի նրան դուրս գնալ Բալգարիայից:

— Թիւրքաց կառավարութեանը իմաց են տրւել, որ իբր թէ Մակեդոնիայի ափերի մօտ նրկատված է մի յունական նաւ, որ, ակնհեռ է, թէ կամուսում էր արել ինչեղնէլ դէպք և պատերազմական ուրիշ պիտոյքներ:

— «Temps» լրագիրը հաղորդում է, որ գերմանական կառավարութիւնը հրահանգներ է ուղարկել Եւրաս-Վոթարինգիայի բոլոր վարչական ատեաններին, որ սրանից յետոյ բոլոր սահմանային յարաբերութիւններին ժամանակ նրանք աւելի հաշտեցուցիչ կերպով գործեն:

— Կ. Պոլսի «Արեւիկ» լրագրում կարգում ենք հետեւեալ լուրը: «Առանպէս աղապիւն պատրիար-

